

## Հայտարարություն

### Լոռու մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն գրադեցնելու մասին

Լոռու մարզպետարանը հայտարարում է **մրցույթ՝ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 95-3.2-Մ3-1)** քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն գրադեցնելու համար:  
**Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 95-3.2-Մ3-1)**

1) մասնակցում է տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի մարզային էջի ինֆորմացիոն սպասարկման (տեղադրման, թարմացման) և շտեմարանների վարման աշխատանքներին.

2) մասնակցում է մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին.

3) մասնակցում է զբոսաշրջության ոլորտի գրանցամատյանների կազմման, վարման, թարմացման, վարչական ռեգիստրի ներդրման, վարման և տեղեկատվական բազայի ստեղծման աշխատանքներին.

4) մասնակցում է այլ երկրների համապատասխան մարմինների և միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների հետ հարաբերություններում Հայաստանի Հանրապետությունը և մարզը ներկայացնելու, բանակցային գործընթացի իրականացման, զբոսաշրջային բնագավառում մարզին վերաբերող համագործակցության փաստաթղթերի, ծրագրերի մշակման աշխատանքներին.

5) մասնակցում է Բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթերի կազմմանը.

6) իրականացնում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված այլ լիազորություններ.

**Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 95-3.2-Մ3-1)** քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն գրադեցնելու համար անհրաժեշտ է.

-բարձրագույն կրթություն.

-հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ

-սույն պաշտոնի հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

-համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-անհրաժեշտ կոմպետենցիաների տիրապետում

Պայմանագրի գործողության ժամկետն է՝ մինչեւ ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքի վերացումը 24.07.2021թ.

Վերը նշված պաշտոնը կարող է գրադեցվել՝ տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները:

-Քաղաքացիական ծառայության պաշտոն գրադեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն գրադեցնելու իրավունքից.

3) տատապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Լոռու Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

գրավոր դիմում (լրացվում է տեղում)

-կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները,

աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում), կամ համապատասխան տեղեկանք

-արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք

-մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի

-անձնագրի պատճենը

**Աշխատավարձի չափը՝ 175932 ՀՀ դրամ**

**Աշխատանքը իրականացվելու է ՀՀ Լոռու մարզպետարանում՝ ք.Վանաձոր Հայքի հրապարակ 1**

**Փաստաթղթերն ընդունվում են՝ 2020թ-ի մայիսի 4-ից ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:**

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող եք դիմել ՀՀ Լոռու մարզպետարան (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռ.2-10-24, էլ. հասցե՝lori.andznakazm@mta.gov.am)

**Գիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020թ-ի մայիսի 7. ժամը 12.30-ը:**